մասին ամենից արժանահավատ սկզբնաղբյուրը հանդիսանում է Կորյունի՝ Մաշտոցի աշակերտի հեղինակած [illegible], որը ավելի մոտիկ է ժամանակով իր ուսուցչի կյանքին և գործունեությանը, քան [illegible] Հայաստանից հեռու գտնվող և Հայաստանի մասին աղոտ պատկերացում ունեցող հույն կամ լատին պատմիչները: Հայկական գրերի ստեղծումը տեղի է ունեցել 406 թվականին:

Գրախոսվող հատորի վերջում տեղավորված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը բոլոր լեզուներով, որը կարևոր օգնություն է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրողներին: Հատորն ունի նաև ժամանակագրական և անունների ցանկեր:

Գրախոսության ծավալը թույլ չի տալիս կանգ առնել ակադ. Մանանդյանի ներկա հատորում առաջ քաշած բազմաթիվ այլ հարցերի վրա, որոնք գիտական մեծ արժեք ունեն: Բոլոր դեպքերում, մեծանուն ակադեմիկոսի աշխատությունը կարևոր ներդրում է հայագիտության մեջ: Նաև ցավալի է, որ հանգուցյալ ակադեմիկոսը չի կարողացել ավարտել ներկա հատորի 2-րդ մասը և ամբողջացնել տարիների իր քրտնաջան աշխատանքների արդյունքը հանդիսացող կոթողական աշխատությունը:

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

С. Г. ШАУМЯН. *Избранные произведения* в двух томах, Госполитиздат, М., 1958, т. I. 558 стр., т. II, 412 стр.

Ս. Գ. ՇԱՀՈՒՄՅԱՆ, *Ընտիր երկեր*, երկու հատորով, Պետքաղհրատ, Մոսկվա, 1958, հատ. I, 558 էջ, հատ. II, 412 էջ:

*Այս տարի հոկտեմբերին լրանում է Վ. Ի. Լենինի մերձավոր զինակից, Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ, մարքսիզմի տեսաբան Ս. Գ. Շահումյանի ծննդյան 80-ամյակը:*

*Պետական քաղաքական հրատարակչության կողմից հրապարակված Ստ. Շահումյանի Ընտիր երկերի երկհատորյակը, որը խնամքով պատրաստել է ՍՄԿԿ ԿԿ կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը՝ Հայաստանի և Ադրբեջանի ֆիլիալների հետ միասին, խոշոր միջոցառում է ականավոր ռևոլյուցիոնի ծննդյան 80-ամյակը նշանավորելու և նրա գրական ժառանգությունը պրոպագանդելու գործում:*

*Ստ. Շահումյանի անունը սերտորեն կապված է Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների պատմության հետ:*

*Երկրամասի՝ ազգային ու կրոնական հակասություններով լեցուն բարդ պայմաններում երկար տարիներ հանդիսանալով սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարի ղեկավարներից մեկը, Ստ. Շահումյանը իր աշխատություններում խորը կերպով վերլուծել է այդ պայքարի ամենաբազմազան ու խճճված հարցերը:*

*Այդ պատճառով էլ ամենայն իրավամբ կարելի է ասել, որ Վ. Ի. Լենինի և Անդրկովկասի ականավոր ռևոլյուցիոն գործիչների աշխատությունների հետ մեկտեղ Ս. Գ. Շահումյանի երկերը հանդիսանում են երկրամասի ռևոլյուցիոն շարժումների ուսումնասիրության բանալին:*

*Այդ աշխատությունները ունեն գիտական մեծ արժեք, ակտուալ նշանակություն և դրսևորում են Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցությունը մարքսիզմի տեսական գանձարանի հարստացման և պրոլետարիատի դիկտատուրայի համար մղված պայքարի գործին:*

*Հատկապես հրամայական անհրաժեշտություն էր դարձել Ս. Գ. Շահումյանի երկերի ռուսերեն հրատարակության գործը:*

*Մինչև այժմ եղած ռուսերեն հրատարակությունների մեջ սույն հրատարակությունը հանդիսանում է ամենալիակատարը և ընդգրկում է Ս. Գ. Շահումյանի 1902—1918 թթ. գրած համարյա բոլոր աշխատությունները, որոնց զգալի մասը տպագրվում է առաջին անգամ:*

*Հրատարակությունը բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը ընդգրկում է 1902—1916, երկրորդը՝ 1917—1918 թվականները:*

* * *

*Ընտիր երկերի առաջին հատորը սկսվում է դեռևս երիտասարդ Ստ. Շահումյանի՝ 1902 թվականին գրած երկու աշխատություններով՝ Ղազարոս Աղայանի գործունեության քառասնամյակի առթիվ գրած ճառով և «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստով, որոնք պարզ կերպով ցույց տվեցին, որ անձին Շահումյանի՝ բանվոր դասակարգի ազատագրության համար մղվող պայքարի ասպարեզ է*

մտնում տեսական մեծ պատրաստություն ունեցող, տաղանդավոր մի գործիչ։

Հայ նշանավոր գրող Ղ. Աղայանի գործունեության քառասնամյակի առթիվ դրված ճառում Ստ. Շահումյանը մարքսիստական դիրքերից սուր քննադատության է ենթարկում հայ բուրժուական ինտելիգենցիային, ազդարարում է հայ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ասպարեզ գալը գրելով «Ազգային-կուլտուրական գործունեության փոխարեն, որին Դուք նվիրել եք առավելապես Ձեր ուժերը, մենք լայն դասակարգա-ռևոլյուցիոն կռիվ ենք քարոզում. բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

«Կորչի՛ք բռնակալության դեմ,
Կեցցե՜ քաղաքական ազատությունը...»[1]։

Նույն թվականին Թիֆլիսում Շահումյանի ակտիվ մասնակցությամբ հիմնադրվում է առաջին հայկական լենինյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը հրատարակում էր իր անլեգալ օրգանը՝ «Պրոլետարիատ» թերթը։

Թերթի առաջին համարում լույս տեսավ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը», ուր բազմակողմանի քննարկման է ենթարկվում կապիտալիզմի զարգացման պրոցեսը Անդրկովկասում՝ նրանից բխող բազմազան հետևանքներով, բանվոր դասակարգի առաջացումը, երկրի տնտեսական անմխիթար վիճակը, կապիտալի և աշխատանքի միջև սրվող հակասությունները, կապիտալիզմի դեմ մղվող պայքարը, բանվորական պարտիաների առաջացման անհրաժեշտությունը, սոցիալիզմի թեորիայի նշանակությունը, որը պետք է «ոգի ներշնչեր այդ կռվին և դարձներ նրան գիտակցական»։

«Մանիֆեստը» գտնում էր, որ բանվոր դասակարգի խնդիրը ցարական ինքնակալության տապալումն ու սոցիալիստական կարգերի հաստատումն է։ «Մեր մոտագա շարժումը յուր մոտավոր նպատակն ունի զարգացնել մեր բանվորական մասսաներում քաղաքական կռվի անհրաժեշտության գիտակցությունը, միացնել նոցա ու մասնակից անել համառուսական շարժմանը միապետությունը տապալելու համար»[2]։

Ազգային հարցում «Մանիֆեստը» առաջադրում էր ճիշտ սկզբունք՝ մեկ պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունք, ազգերի լիակատար իրավահավասարություն։

Վ. Ի. Լենինը 1903 թ. փետրվարին «Իսկրա» թերթի № 33-ում տպագրված հոդվածում ջերմորեն ողջունում է «Հայ սոցիալ-դեմոկրատների» միությունը և «Պրոլետարիատ» թերթում հրապարակված միության մանիֆեստը[1]։

1902 թ. աշնանը Ս. Գ. Շահումյանը ընդունվում է Բեռլինի համալսարանը։ Սերտ կապերի մեջ գտնվելով Վ. Ի. Լենինի հետ, նա ուսմանը զուգահեռ խոշոր ռևոլյուցիոն աշխատանք է ծավալում արտասահմանում։

1904 թ. վերադառնալով արտասահմանից, Ստ. Շահումյանը Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման մյուս ականավոր գործիչների հետ միասին կազմակերպում ու ղեկավարում է երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքները, բանվոր դասակարգի ու գյուղացիության պայքարը ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի։

1905 թ. բռնկվում է իմպերիալիզմի կարաշրջի առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան, որը մեծ քննություն էր բոլոր քաղաքական պարտիաների և հասարակական գործիչների համար։

Ռևոլյուցիայի տարիներին դրսևորվում են Շահումյանի, որպես խոշոր ռևոլյուցիոների, մասսաների մեծ ղեկավարի անընդգրկելի տաղանդը, նրա փայլուն ընդունակությունները։

Նա ղեկավարում էր բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքները, գործադուլներն ու ցույցերը, հանդես էր գալիս ժողովներում ու միտինգներում, ուղղություն էր տալիս մամուլին, գրում էր մեծ թվով տեսական ու պրոպագանդիստական հոդվածներ՝ իր պողպատյա անհաղթահարելի տրամաբանությամբ ապացուցելով պրոլետարիատի՝ պատմության օբյեկտիվ զարգացմամբ պայմանավորված հաղթանակի անխուսափելիությունը։

1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Շահումյանը խորը ուսումնասիրելով մարքս-լենինյան թեորիային, հմտորեն կիրառում այն կապելով բանվորական շարժման զարգացման տվյալ էտապի կենսական հարցերի հետ, մինչև կանգնած լենինյան դիրքերում, առանց տատանումների, զարմանալի խորությամբ կարողանում էր թափանցել հասարակական պրոցեսների խորքը, դեռևս սաղմնային վիճակում տեսնել նրանց զարգացման տենդենցը և մշակել համապատասխան վարքագիծ։

[1] С. Г. Шаумян, Избранные произведения, т. I, стр. 13.

[2] С. Г. Шаумян, Նշվ. աշխատ., հ. I, էջ 17։

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 6, էջ 408—412։

Ռևոլյուցիան ցույց տվեց, որ հանձին Շահումյանի՝ պարտիան ձեռք է բերել նոր տիպի ղեկավարի, լենինյան տիպի ղեկավարի, քաղաքական առաջնորդի, որը կոչված է պրոլետարիատի դասակարգային մեծ դոտեմարտերը ղեկավարելու։

Ռևոլյուցիայի փոթորկալից ալիքների մեջ, լինելով այդ շարժման կենտրոնական դեմքերից մեկը, Շահումյանը ղեկավարում էր բանվոր դասակարգի և գյուղացիության ցարիզմի դեմ ուղղված հերոսական պայքարը։

1905—1907 թթ. գրած հոդվածները նվիրված են բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայում լենինյան տակտիկայի պաշտպանությանը։ «Մեր խնդիրները», «Ռևոլյուցիայի նոր հաղթությունը», «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը», «Ազատությունները կենսագործվում են», «Վերադարձ չկա», «Վերջին հեռագրերից», «ՌՍԴԲՊ վերջին համագումարը», «Կառավարությունը և Դուման», «Վերջին դեպքերը», «Ներկա մոմենտը» և այլ բազմաթիվ հոդվածներում Ս. Գ. Շահումյանը վերլուծում է առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շարժիչ ուժերը, պաշտպանում այդ ռևոլյուցիայում պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան ուսմունքը, առաջ քաշում զինված ապստամբության, բանվոր դասակարգի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրայի լոզունգները, մինչև վերջ մերկացնում էսեռամենշևիկյան պարտիաների հակաժողովրդական և կադետների հակառևոլյուցիոն քաղաքականությունը։

Պաշտպանելով բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայում պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան ուսմունքը և մերկացնելով էսեռամենշևիկյան պարտիաներին, Ստ. Շահումյանը գրում էր. «Ռուսական մեծ Ռևոլյուցիան կատարվում է պրոլետարիատի ղեկավարությամբ: Իր դասակարգային շահերը գիտակցած, բուրժուազիայի խնամակալության տակից դուրս պրծած. միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դրոշակի տակ որպես ինքնուրույն դասակարգային պարտիա կազմակերպված Ռուսաստանի պրոլետարիատը ոչ միայն արյուն է թափում, այլև ներկա ռևոլյուցիայում հանդես է գալիս որպես տեր ու տիրական»[1]։

Ելնելով երկրամասի ազգային բարդ հարաբերություններից, Ս. Գ. Շահումյանը մեծ ուշադրություն էր նվիրում նացիոնալիզմի դեմ մղվող պայքարին, նա գտնում էր, որ նացիոնալիզմը Կովկասում եղել է և կմնա ռևոլյուցիայի ամենաոխերիմ թշնամին։

«Դաշնակցությունը — «պրոլետարիատի ղեկավար», «Դաշնակցական համագումարը Էջմիածնում», «Առաջիկա ընտրությունները Թիֆլիսում և «դաշնակցություն» պարտիան» և այլ հոդվածներում Ստ. Շահումյանը մինչև վերջ մերկացնում է դաշնակցության կոնտրռևոլյուցիոն էությունը, ցույց է տալիս, որ այդ պարտիան ո չ ռևոլյուցիոն է և ո չ էլ սոցիալիստական, այլ այդպիսի դիմակ է հագել ռևոլյուցիայի և սոցիալիզմի դեմ հաջող կռվելու համար։

Տալով «դաշնակցություն» պարտիայի դասակարգային էության դիպուկ գնահատականը, Շահումյանը գրում էր. «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «Դաշնակցություն» պարտիայի մեջ տեսնում էր իր ռազմական զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին. ուստի և բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես, օգնում էր այդ պարտիային»[1]։

Պրոպագանդելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի իդեաները, Շահումյանը բացահայտում է դաշնակցության ազգայնական, կոնտրռևոլյուցիոն էությունը, ցույց տալիս այն մեծ վնասները, որ այդ պարտիան և ընդհանրապես նացիոնալիզմը հասցնում է բանվորական շարժման զարգացմանը Անդրկովկասում։

Լինելով Կոմունիստական պարտիայի հայտնի տեսաբաններից մեկը, «թեորիական մարքսիզմի ծանր հրետանին», իր ռևոլյուցիոն պրակտիկ գործունեությամբ կապված այդ շարժման կենսական հարցերի հետ, Ս. Գ. Շահումյանը մշտապես զբաղվում էր մարքս-լենինյան թեորիայի մշակման հարցերով, հոդվածներ գրում մարքսիստական փիլիսոփայության, քաղաքատնտեսության, դասակարգային պայքարի թեորիայի և ազգային հարցի մասին։

Այդ հոդվածներից են՝ «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» (1905), «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» (1905), «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» (1916) և այլն։

«Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» աշխատությունում փայլուն կերպով դրսևորվում է մարքսիստ տեսաբանը։ Ստ. Շահումյանը խոր, մարքսիստական վերլուծման է ենթարկում կապիտալիստական հասարակարգի դասակարգային կազմը, ժամա-

[1] С. Г. Шаумян, Երկ. ժողով., հ. 1, էջ 72—73։

[1] Նույն տեղում, էջ 214։

նակակից դասակարգերի պատմական ծագումը և նրանց վիճակը։

Հենվելով հարուստ տվյալների վրա նա համոզիչ կերպով ցույց է տալիս կապիտալիստական հասարակարգի անտագոնիստական հակասությունները, նշում է, որ «...ազգաբնակության ահագին մասսաները հետզհետե անցնում են պրոլետարիատի շարքերը, որ հավելյալ արժեքի նորման, ուրիշ խոսքով, ինչպես դիտենք, բանվորների շահագործության աստիճանը քանի գնում ավելի ու ավելի բարձրանում է, որ ալկոհոլիզմը, ոճրագործությունները, պրոստիտուցիան և դրանց հետ կապված հիվանդությունները, մահացությունը քանի գնում ավելի ու ավելի մեծ չափեր են ընդունում»[1]։

Ստ. Շահումյանը ցույց է տալիս աշխատավորության թշվառ դրության պատկերը և միաժամանակ գտնում, որ այն սոսկալի լինելով հանդերձ, բարեբախտաբար հուսահատական չէ, քանի որ միևնույն ժամանակ կռվի մեջ կոփվում են այն զենքերը, որոնք պետք է հարվածեն ու վերացնեն այդ չարիքները։

Նա հերքում է բուրժուական գիտնականների և մարքսիզմի ռևիզիոնիստների այն տեսակետը, թե իբր սոցիալական ռեֆորմների ճանապարհով բանվոր դասակարգի դրությունը քանի գնում լավանում է, ջնջում է այն իրողությունը, որ առանձին ձեռք բերված հաջողությունները աննշան կաթիլներ են թշվառության այն օվկիանոսում, որ ներկայացնում է իրենից բանվոր դասակարգի դրությունը։

Իրենց խորը գիտականությամբ հիացմունք են պատճառում նաև «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» և «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածները, որոնցից առաջինում Ստ. Շահումյանը պաշտպանում է մարքսիստական փիլիսոփայության հիմնական դրույթները՝ կապված հասարակական երևույթների զարգացման էվոլյուցիոն և ռևոլյուցիոն պրոցեսների հետ, բացահայտում է ռեֆորմիզմի սոցիալական արմատները, միաժամանակ ընդգծելով հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքները բացասող անարխիստներին, իսկ երկրորդում՝ վերլուծության է ենթարկում կապիտալիստական հասարակարգում ինտելիգենցիայի հասարակական դերի հարցը։

Ս. Գ. Շահումյանը պատկանում է Ռուսաստանում ազգային հարցով զբաղվող առաջին մարքսիստների թվին։ Ինչպես հայտնի է, նա սերտ նամակագրություն ուներ Վ. Ի. Լենինի հետ։ Այդ նամակների զգալի մասը նվիրված է ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի մշակմանը։

Այդ հարցին են նվիրված «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906), «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1911), «Ազգային հարցը և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան» (1916) աշխատությունները և 1913—1914 թթ. Վ. Ի. Լենինին գրած մի շարք նամակներ, որոնք տեսական մեծ նշանակություն ունեն։

Այդ աշխատություններն ու նամակները վկայում են, որ Ս. Գ. Շահումյանը հանդիսացել է ազգային հարցի խոշոր տեսաբաններից մեկը, որի հետ շատ հաճախ խորհրդակցում էր Վ. Ի. Լենինը։ Նա ակտիվ կերպով մասնակցել է բոլշևիկյան պարտիայի ազգային հարցի ծրագրի մշակմանը և պաշտպանությանը։

Հիանալի ծանոթ լինելով եվրոպական, ռուս և հայ գրականությանը, Ստ. Շահումյանը զբաղվել է նաև գրականության և արվեստի հարցերով։ Նրա «Ընթերցողի տարակուսանքը» (1910), «Գորկու մասին» (1911), «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին» (1911), «Հայ գրականության ժողովրդի մասին» (1916) և մի շարք այլ հոդվածներ նվիրված են գրականության պարտիականության լենինյան սկզբունքների պաշտպանությանը։

Հայ գրականությանը նվիրված հոդվածները մեծ նշանակություն ունեն մեր ժողովրդի պատմության և կուլտուրայի գնահատության գործում։

Ս. Գ. Շահումյանի Ընտիր երկերի երկհատորյակի առաջին հատորում զետեղված հոդվածների ուսումնասիրությունը համառոտակի ցույց է տալիս ավելի լրիվ պատկերացնելու լենինյան գվարդիայի այդ ականավոր գործչի մինչև փետրվարյան ռևոլյուցիան անցած փառապանծ ուղին։ Սերտորեն կապված լինելով աշխատավոր մասսաների հետ, նա հմտորեն ղեկավարել է Կովկասի ռևոլյուցիոն շարժումները, իր աշխատություններում ընդհանրացրել ցարիզմի դեմ մղվող պայքարի փորձը և աշխատավոր բնակչությանը տարել է դեպի սոցիալիզմի հաղթանակը։

Ս. Գ. Շահումյանի Ընտիր երկերի երկրորդ հատորում ընդգրկված են փետրվարյան ռևոլյուցիայից մինչև Բաքվի կոմունայի անկումը գրված հոդվածները, ճառերը և փաստաթղթերը։

Այս հատորում զետեղված աշխատությունները ցույց են տալիս, թե ինչպիսի բուռն գործունեություն էր ծավալել Ստ. Շահումյանը բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստականի

[1] С. Г. Шаумян, Նշվ. աշխատ., հ. I, էջ 55—56։

վերաճելու և ամբողջ իշխանությունը Սովետներին անցնելու համար մղվող պայքարում։

Ռևոլյուցիայի սկզբից նեթ Ստ. Շահումյանը անհաշտ վերաբերմունք է հանդես բերում բուրժուական ժամանակավոր կառավարության նկատմամբ՝ ընդգծելով նրա կոնտրռևոլյուցիոն էությունը։

Ապրիլյան ճգնաժամից հետո, երբ ստեղծվեց կոալիցիոն կառավարությունը, որը փաստորեն դաշինք էր բուրժուազիայի և համաձայնողական պարտիաների միջև, պարտիաներ, որոնք բացարձակորեն անցան բուրժուազիայի լագերը, Ստ. Շահումյանը հանդես եկավ մի շարք հոդվածներով՝ «Մինիստրական կրիզիսի առթիվ», «Կոալիցիոն մինիստրությունը», «Քաղաքական ճգնաժամը» և այլն, որոնցում քննադատում էր այդ նոր կառավարության ռեակցիոն էությունը։ «Առաջին հայացքից թվում է, թե դա մի քայլ է դեպի առաջ,— գրում էր Ստ. Շահումյանը,— նախկին զուտ բուրժուական մինիստրության տեղ այժմ գոյություն ունի կիսով չափ սոցիալիստական մինիստրություն։ Բայց իրոք ներկա դրությունը ավելի ձեռնտու է բուրժուազիային։ Կոալիցիոն մինիստրությունը նա պիտի ծառայեցնի իր դասակարգային շահերին նույնպես, ինչպես նախկին միապաղաղ մինիստրությունը, միայն այն տարբերությամբ, որ այժմ նա պատասխանատվությունը վերցնում է իր վրայից և գցում դեմոկրատիայի ներկայացուցիչների վրա»[1]։

Ստ. Շահումյանի այս շրջանում գրված հոդվածները մեծ նշանակություն ունեցան 'սեռամենշևիկյան պարտիաների դավաճանական քաղաքականության մերկացման գործում։

Հունիսի 3-ին Պետրոգրադում բացվում է Սովետների առաջին համագումարը, որտեղ բոլշևիկյան պարտիայի Կենտկոմի հանձնարարությամբ հաշտության մասին բանաձևի առաջարկությամբ և պաշտպանությամբ հանդես է գալիս Ստ. Շահումյանը։

Հուլիսյան դեպքերով սկսվում է ռուսական ռևոլյուցիայի զարգացման նոր էտապը։ Ժամանակավոր կառավարությունը իր ձեռքը վերցրեց ամբողջ իշխանությունը։ Երկիշխանության վերացման հետ միասին վերացավ նաև ռևոլյուցիայի զարգացման խաղաղ ժամանակաշրջանը։ Ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում կոնտրռևոլյուցիան լայն ճակատով հարձակման անցավ։ Բոլշևիկյան պարտիայի վարկաբեկման և հալածման գործում բուրժուազիան և էսեռա-մենշևիկյան պարտիաները հանդես էին գալիս միասնական լագերում։

Ճիշտ գնահատելով հուլիսյան դեպքերը, Ստ. Շահումյանը բացատրական լայն աշխատանք է ծավալում բուրժուա-նացիոնալիստական և էսեռա-մենշևիկյան պարտիաների հերյուրանքներին հակահարված տալու ուղղությամբ։

«Ռևոլյուցիայի նոր բռնկում Պետրոգրադում», «Ռևոլյուցիան վտանգի մեջ է», «Ռեակցիա», «Մի անգամ ևս գրպարտիչների մասին», «Պետրոգրադի իրադարձությունները», «Խայտառակությունը», «Պետրոգրադի դեպքերը» և մի շարք այլ հոդվածներում Ստ. Շահումյանը վեր է հանում ու հիմնավորում այն պատճառները, որոնք փողոց դուրս բերեցին Պետրոգրադի ռևոլյուցիոն պրոլետարիատին ու զինվորներին։ Կոալիցիոն կառավարությունը ի վիճակի չէր լուծելու այն մեծ խնդիրները, որոնք դրված էին ռուսական ռևոլյուցիայի առաջ։ Բանվոր դասակարգը դուրս եկավ փողոց ցույց տալու իր թշնամիներին, որ նա պատրաստ է արյան գնով պաշտպանելու ռևոլյուցիան, գրում էր Ստ. Շահումյանը։

Այն բանից հետո, երբ բոլշևիկյան պարտիան զինված ապստամբության կուրս վերցրեց, Ստ. Շահումյանը իր բոլոր ուժերը նվիրեց այդ խնդրի կենսագործմանը Անդրկովկասում։

1917 թ. հոկտեմբերի 2—7-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը, որը ղեկավարում էր Պետրոգրադից նոր ժամանած Ստ. Շահումյանը։

Համագումարի ուշադրության կենտրոնում գտնվում էր նրա «Ընթացիկ մոմենտի մասին» զեկուցումը։ Իր զեկուցման մեջ Ստ. Շահումյանը հանրագումարի բերեց փետրվարյան ռևոլյուցիայից հետո պարտիայի կատարած աշխատանքները և առաջադրեց այն խնդիրները, որոնցով պետք է ղեկավարվեին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները. հաստատուն կերպով գնալով դեպի զինված ապստամբություն։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո պայքարը Սովետական իշխանության հաստատման համար ընդունում է ավելի սուր բնույթ և բորբոքվում է ավելի մեծ թափով։

Ստ. Շահումյանը դեկտեմբերի 16-ին նշանակված լինելով Կովկասի գործերի արտակարգ կոմիսար, Անդրկովկասի չափազանց բարդ պայմաններում ղեկավարում է Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա Սեյմի դեմ մղվող պայքարը, նա դիմակազերծ է անում էսեռա-մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին, համախմբում երկրամասի աշխատավոր բնակչությանը Սովետական իշխանության համար մղվող պայքարում։

[1] С. Г. Шаумян, Նշվ. աշխատ., հ. II, էջ 17։

Այդ խնդիրներին են նվիրված «Ռուսական ռևոլյուցիան և Անդրկովկասյան իշխանությունը», «Կովկասյան պաշտպանողականները Կարաուլովի դաշնակիցներն են», «Նացիոնալիզմը Կովկասում և ռազմաճակատի մերկացումը», «Կովկասյան երկրամասի բանվորների դեպուտատների Սովետների համագումարը», «Բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների բոլոր Սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին», «Հողային հարցը և գյուղացիական ռևոլյուցիան Անդրկովկասում» և բազմաթիվ ուրիշ հոդվածներ, որոնցում Շահումյանը քննելով ռևոլյուցիայի զարգացման ամենաբարդ ու խճճված հարցերը, բացահայտելով էսեռա-մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կործանարար դերը Սովետական իշխանության համար մղվող պայքարում, պարզ ու հստակ նշում է այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի համար։

Թե որքան ճիշտ է եղել Շահումյանի գործունեությունը ռևոլյուցիայի զարգացման այդ ամենադժվարին շրջանում, ցույց է տալիս Վ. Ի. Լենինի նամակը, որտեղ կարդում ենք.

«Թանկագին ընկեր Շահումյան։

Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք Ձեր հաստատակամ ու վճռական քաղաքականությունից[1]

1918 թ. մարտին Բաքվի բազմազգ պրոլետարիատը ջախջախեց մուսավաթականների խռովությունը, որի հետևանքով ամբողջ իշխանությունը անցավ Սովետի ձեռքը։ Ապրիլի 25-ին Սովետը ստեղծեց Բաքվի առաջին Ժողկոմսովետը, որի նախագահ և արտաքին գործերի կոմիսար ընտրվեց Ս. Գ. Շահումյանը։

Բաքվի կոմունայի շրջանում դրսևորվեցին Ստ. Շահումյանի, որպես ականավոր պետական գործչի փայլուն ընդունակությունները։

Բաքվի կոմունայի պատմությունը միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի դեմ մղված հերոսական պայքարի պատմություն է, որը հանդիսանում է ամբողջ Ռուսաստանում Սովետական իշխանության համար բանվոր դասակարգի մղած պայքարի լավագույն էջերից մեկը։

Կարճ ժամանակամիջոցում Բաքվում կատարվեցին սոցիալիստական խոշոր վերափոխություններ։ Առաջին հերթին լիկվիդացվեց հին պետական ապարատը, վերակազմվեց միլիցիան և ստեղծվեցին նոր ժողովրդական դատարաններ։

Մեծ դժվարությունների հաղթահարումով ազգայնացվեցին նավթարդյունաբերությունը և ձկնորսարանները, բանկերը և կասպիական առևտրական նավատորմը, հրապարակվեց հողի սոցիալիզացիայի մասին օրենքը և այլն։

Ստ. Շահումյանի Ընտիր երկերի երկրորդ հատորում զետեղված հոդվածների ու փաստաթղթերի մի զգալի մասը գրված է Բաքվի կոմունայի ժամանակաշրջանում։ Դրանց մեջ արտացոլվում է Բաքվի Ժողկոմսովետի գործունեությունը սոցիալիստական վերափոխությունների ընագավառում, Կովկասի և մասնավորապես Ադրբեջանի բոլշևիկների հերոսական պայքարը միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի ուժերի դեմ։

«Ընթացիկ մոմենտի և իշխանության կազմակերպման մասին», «Բաքվի Ժողկոմսովետի դեկլարացիան», «Իշխանության հարցն Անդրկովկասում», «Հին դպրոցի մասին», «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի գրության մասին», «Մենշևիկների դերը Անդրկովկասում» և այլ հոդվածներում ու ճառերում, Վ. Ի. Լենինին ու մյուսներին գրած նամակներում ու հեռագրերում պարզ կերպով երևում է ամբողջական պատկերը այն մեծ պայքարի, որ ծավալել էր Ստ. Շահումյանը սոցիալիստական վերափոխությունների կենսագործման, էսեռա-մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ մղվող պայքարի, միջազգային իմպերիալիզմի ուժերին հակահարված տալու գործը կազմակերպելու բնագավառում։

Սակայն, չնայած ձեռք առած միջոցառումներին, միջազգային իմպերիալիզմի գերակշռող ուժերի դեմ մղվող անհավասար գոտեմարտում Բաքվի Սովետական իշխանությունը պարտվեց։

Ընտիր երկերի երկհատորյակը վերջանում է Բաքվի բանվորներին ուղղված կոչով և «Նոր իշխանության կերպարանքը», «Անազնիվ գրպարտիչներ» հոդվածներով, որոնց մեջ մերկացնելով ռևոլյուցիայի բոլոր թշնամիներին Շահումյանը հաստատ հույս է հայտնում, որ «Ռևոլյուցիոն Սովետական Ռուսաստանը, եթե ստիպված էլ լինի ժամանակավորապես հեռանալ,— բայց նա դարձյալ կգա Բաքու։ Կգա... որպեսզի վերականգնի Բաքվի՝ Ռուսաստանի հետ կապի միասնությունը և նորից հաստատի այստեղ, և, կարող է պատահել, ամբողջ Անդրկովկասում, Սովետական բանվորա-գյուղացիական Սոցիալիստական իշխանությունը»[1]։

Ս. Գ. Շահումյանի Ընտիր երկերի երկհատորյակը, որը արտացոլում է փառապանծ ռևոլյու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

[1] С. Г. Шаумян, Նշվ. աշխատ., հ. II, էջ 276։

ցիոնների կյանքի մարտական ուղին, Անդրկովկասի բանվորական շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների հերոսական պատմությունը, սիրով ու հետաքրքրությամբ կընդունվի սովետական ժողովրդի կողմից և, անկասկած, մեծ օգնություն ցույց կտա Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության պատմությունը ուսումնասիրողներին։

Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

## С. Г. АРЕШЯН. *Армянская печать и царская цензура*, АН Армянской ССР, Институт литературы им. М. Абегяна, Ереван, 1957, 515 стр. (на русском языке)

Книга С. Арешян посвящена истории цензурных преследований армянской печати, политике царской цензуры в отношении армянской дореволюционной литературы.

История армянской печати и царской цензуры рассматривается автором на широком фоне политических, культурных и литературных взаимоотношений русского народа с армянским.

Раскрывая реакционную роль царской цензуры, С. Арешян показывает, что «вне многовековой перспективы дружественных связей русского и армянского народов невозможно правильное понимание вопросов развития армянской печати и той борьбы, которую приходилось выдерживать ее передовым деятелям с царской цензурой»[1].

Рассматривая с марксистских позиций поставленную в книге проблему, С. Арешян на конкретном примере истории армянской печати показывает сущность реакционной политики самодержавия и совместную борьбу передовых деятелей армянской и русской культуры за просвещение народа, против угнетения политического и культурного.

Книга состоит из восьми глав, охватывающих период от возникновения первых армянских колоний в России, книгопечатания и установления цензуры до начала Великой Октябрьской социалистической революции.

В приложении к книге опубликовано около ста текстов архивных документов, касающихся запретов отдельных произведений армянских писателей, статей периодической печати, армянских газет, журналов и т. д.

В книге хронологически раскрывается история борьбы за утверждение демократической, а впоследствии и армянской большевистской печати. Одновременно в ней делаются выводы и обобщения, представляющие несомненный интерес.

Читатель найдет в книге С. Арешян много неизвестных ему сведений о различных армянских изданиях, узнает подробную историю запретов многих газет и журналов, изданных книг и рукописей писателей.

Целью настоящей статьи не является подробная характеристика отдельных глав книги с подробным изложением их содержания. Касаясь вопросов, выдвинутых в книге, хотелось по мере возможности лишь в отдельных частностях и деталях дополнить труд С. Арешян новыми архивными документами.

В книге автор справедливо указывает, что изучение такой сложной и большой проблемы, как политика царской цензуры и культура народов, населявших Россию, фактически только начинается. Поэтому введение в научный обиход все новых и новых фактов, многие из которых все еще лежат в нетронутых до сих пор архивных делах, безусловно поможет нашей научной общественности полнее представить картину борьбы передовых сил народа с форпостом реакции в области печатного слова — цензурой.

* * *

Историю возникновения цензуры по армянской печати автор излагает с того времени, когда делались первые попытки оторвать светские армянские издания от преследующего ока Эчмиадзина. С. Арешян совершенно правомерно подробно останавливается на вопросе борьбы католикосата за свои «права» в цензуровании армянских из-

[1] *С. Арешян*, Армянская печать и царская цензура, стр. 6.